



ԱՌՄԱԶՆՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՅՈՑ

DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA, 630 SECOND AVENUE, NEW YORK, N.Y. 10016-4885 212 686-0710

Archbishop Torkom Manoogian, Primate

Մարտ 2, 1990

Արժանաշնորհ
Տ. Զենոբ Բհնյ. Նալպանտեան
Հովի Ա. Խաչ Եկեղեցւոյ
Նախագահ Ծխական Խորհուրդի
Լօրէնս.

Սիրելի Տէր Հայր,

Ստացուած է Առաջնորդ Սրբազան Հօր ուղղուած Փետրուար 23, 1990 թուակիր ձեր
ճամակը:

Այս ճամակով կը տեղեկացնէք թէ Փետրուար 11-ին, 1990, տեղի ունեցած է համայնքի
Տարեկան Անդամական Ժողովը, եւ այդ առթիւ ընտրուած են նաեւ Ծխական Խորհուրդի երեք
անդամները: Կու տաք բուեարկութեանց արդիւնքը եւ կը խնդրէք նորընտիր անդամներու
վաւերացումը:

Այս գրութեամբ կը փափաքիմ տեղեկացնել որ կը վաւերացուի Ծխական Խորհուրդի
հետեւեալ անդամներու ընտրութիւնը՝

Լարրի Բահիկեան
Պերճ Նալպանտեան
Էլիզա Գրիգորեան

Բարի եղէք շուտով Առաջնորդարան ղրկել Ծխական Խորհուրդի նորընտիր դիւանի
անդամներուն անունները, հասցէները եւ հեռաձայնի թիւերը:

Զեգի եւ ձեր պաշտօնակիցներուն կը մաղթեմ յառողջութիւն եւ ձեր բոլորին եկեղեցանուէր
աշխատանքներուն յաջողութիւն:

Աղօթակից

Խաժակ Վրդ. Պարսամեան
Առաջնորդի Փոխանորդ



ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՅ

DIocese of the Armenian Church of America, 630 Second Avenue, New York, N.Y. 10016-4885 212 686-0710

Թի 294
Դեկտեմբեր 19, 1990

Արժանաշնորհ
Տ. Զենոբ Բհնյ. Նալպանտեան
Հովի Ա. Խաչ Եկեղեցոյ
Լորէնս.

Սիրելի Տէր Հայր,

Ստացած ենք Դեկտեմբեր 3, 1990 թուակիր ձեր նամակը, որով կը տեղեկացնէք թէ 1991 Հոկտեմբերին կը ծրագրուի նշել Եկեղեցոյդ հիմնադրութեան եւ օծման 60-ամեակը, եւ այս առթիւ հրաւեր կ'ուղղէք մեզի նախագահելու արարողութեանց եւ հանդիսութեանց:

Սիրով կ'ընդունինք ձեր հրաւերը: Մեզի համար յարմարօրէն թուականն է 1991, Հոկտեմբեր 20:

Բարի եղէք նկատի ունենալ վերոյիշեալ թուականը եւ ըստ այնմ կատարել ձեր կարգադրութիւնները:

Սիրոյ ողջունի

Խաժակ Եպս. Պարսամեան
Առաջնորդ



DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA
ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԹԵՄԻ

BISHOP KHAJAG BARSAMIAN, PRIMATE

Թի 849
Ապրիլ 8, 1992

Արժանաշնորհ
Տ. Զենոբ Բենյ. Նալպանտեան
Հովի Ա. Խաչ Եկեղեցոյ
Նախագահ Ծխական Խորհուրդի
Լօրէնս.

Սիրելի Տէր Զենոբ,

Ստացած ենք համայնքիդ Անդամական Ժողովի տեղեկագիրները եւ Մարտ 4, 1992 թուակիր ձեր նամակը, որով կը տեղեկացնէք թէ համայնքիդ Տարեկան Անդամական Ժողովը գումարուած է Փետրուար 23, 1992-ին, եւ այդ առթիւ ընտրուած են Ծխական Խորհուրդին երեք անդամներ: Կու տաք քուէարկութեանց արդիւնքը եւ կը խնդրէք նորընտիր անդամներու վաւերացման պաշտօնագիրը:

Այս գրութեամբ կը վաւերացնենք Ծխական Խորհուրդի հետեւեալ անդամներու ընտրութիւնը.

Հարրի Ապոզէթեան
Ծան Ծգնաւորեան
Էլիզա Գրիգորեան

Բարի եղէք շուտով Առաջնորդարան դրկել Ծխական Խորհուրդի նորընտիր դիւանի անդամներուն անունները, հասցէները եւ հեռաձայնի թիւերը:

Այս առթիւ ձեր ուշադրութեան կը յանձնենք որ համաձայն Կանոնադրութեան՝ Անդամական Ժողովի դիւանի ընտրութիւնը եւս պէտք է ըլլայ երկպատիկ ցանկի մը վրայէն եւ գաղտնի քուէարկութեամբ:

Կ'օրհնենք Ծխական Խորհուրդի նոր կազմը: Մեր մաղթանքն է որ Տէրը Իր հովանիին ներքեւ պահէ համայնքիդ անդամները եւ բոլորիդ եկեղեցանուէր աշխատանքներուն յաջողութիւն պարգեւէ:

Սիրոյ ողջունի

Խաժակ Եպս. Պարսամեան
Առաջնորդ